ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (Ք. Ա. IV-III ԴԱՐԵՐ)*

Հայկարամ Հակոբյան

Բանալի բառեր՝ *թեոկրատիա, միապետ, բազմաստվածություն, քրմապետ, դինաստիա, թագավորական նախնիների պաշտամունք, պաշտամունքային կենտրոն:*

Երվանդունյաց դարաշրջանը Հայաստանում բաժանվում է 3 մեծ փուլերի՝

ա/ Ք.ա. VII դարավերջից մինչև 521 թ.,

բ/ Ք.ա. 521-331 թթ., երբ Հայաստանը գտնվում էր Աքեմենյան տերության կազմում,

գ/ Ք.ա. 331-201 թվականներ:

Այս երեք շրջաններից առաջին երկուսում Հայաստանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության մասին մեզ տեղեկություններ չեն հասել, ուստի ստորև քննության կենթարկենք երրորդ շրջանին վերաբերող փաստերը:

Ք. Ա. IV-III դարերի պատմությանն անդրադառնալիս կարևոր է ուշադրություն դարձնել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության խնդրին: Պատմության այդ ժամանակահատվածում չափազանց մեծ էր հոգևոր իշխանության դերը հասարակության և ընդհանրապես պետության կենսագործունեության մեջ: Այդ հարաբերությունները հանդիսանում էին երկրի ներքին ու արտաքին իրավիճակի կայունության ապահովության, երկրի գերագույն կառավարության հաստատության և բնականոն զարգացման օժանդակ գործոններից մեկը: Հոգևոր իշխանության ազդեցիկ դիրքը պայմանավորված էր կրոնական, գաղափարական, մշակութային, իրավական,տնտեսական, ռազմական և տոհմական ծագման գործոններով:

Երվանդունիների թագավորությունում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները զարգանում էին իրենց նախորդած Վանի թագավորության հիմքի վրա և Աքեմենյան տերության ազդեցությամբ, ինչը պայմանավորված էր երկարատև այդ կայսրության տիրապետության տակ լինելու հանգամանքով: Ուրարտուն թեոկրատիկ միապետություն էր [1]:Այդ միապետության թեոկրատիկ բնույթը երևում է նրանից, որ արքայական դինաստիայի ձեռքում էին կենտրոնանում ինչպես աշխարհիկ, այնպես է հոգևոր իշխանությունները: Այդ ժամանակաշրջանում դա տարածված երևույթ էր նաև Արևելքի այլ երկրներում: Օրինակ՝ Ասորեստանի թագավոր Սալամանասար Ա-ն Ուրարտուի վրա հարձակվելու մասին իր արձանագրությունում գրում է, որ ինքը արշավանքը սկսել է իր «քրմության սկզբում» [2]: Ուրարտուի արքայական իշխանության աստվածպետականությունը նկատելի է նաև ծայրահեղ կրոնական բնույթի արքայական տարեգրությունից: Ուրարտու պետության գլխին կանգնած էր արքան: Հին արևելյան միապետների նման նա իրականացնում էր անսահմանափակ, բռնապետական իշխանություն: Թագավորն էր երկրի գլխավոր ղեկավարը, հրամանատարը և դատավորը: Արքայական իշխանությունը ժառանգական էր, ինչի մասին վկայում է Սարդուրի արքայի այն խոսքը, որ «Խալդին իրեն նստեցրեց հայրական գահին»[3], և որ ինքը ժառանգել է հայրական իշխանությունը: Գահ բարձրանալիս ուրարտական արքաները թագադրվում էին հատուկ արարողությամբ: Թագադրության վայրը Արդի-

---

* Հոդվածն ընդունվել է18.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
Ա. Մովսիսյանը: 01.11.19:

նին (Մուսասիրն) էր՝ ուրարտացիների հոգևոր կենտրոնը, որտեղ գտնվում էին գլխավոր աստված Խալդի տաճարն ու արծանը, որի առջև էլ կատարվում էր գահակալությունը: Արքան համարվում էր Խալդիի տեղապահը երկրի վրա: Ասորեստանի Սարգոն արքան հիշատակում է, որ Խալդի աստծու մեհյանը կողոպտելու ժամանակ այնտեղ տեսել է Արգիշտի արքայի արծանը, որը աջ ձեռքով օրհնում էր և որի գլխին դրված է եղել աստվածների խույրը [4]: Աջ ձեռքով օրհնելը հոգևոր գործառույթ է, որը մինչև այսօր էլ կարելի է տեսնել կիրառության մեջ, հոգևոր դասի կողմից: Իսկ տաճարում մահացած արքայի արծանը աստվածների խույրով կանգնեցնելու փաստը վկայում է թագավորական նախնիների պաշտամունքի մասին:

Երվանդունիները մոտ երկու դար լինելով Աքեմենյան տերության տիրապետության տակ՝ չէին կարող զերծ մնալ դրա ազդեցությունից: Ամբողջ Փոքր Ասիայում պարսկական բարգավաճումը ներկայացվում էր որպես կայուն աստվածապետական թագավորության արդյունք. «Մերձավոր Արևելյան մտածելակերպում կասկած չկար, որ աշխարհը կառավարվում էր աստվածային ուժի կողմից և որ արքաները ու նրանց նշանակած պալատականները երկրային արտացոլումն էին երկնային հիերարխիկ կատարելության» [5]: Աքեմենյան արքաները արձանագրություններում իրենց ներկայացնում էին որպես Ահուրամազդայի երկրպագողներ[6] : Զրադաշտականության միջոցով աքեմենյան արքաները «ընդգծում էին իրենց զորությունը ու արձանագրում իրենց հեղինակությունը, շեշտելու համար գահակալելու իրենց իրավունքը»[7]: Նրանց միապետական արարողակարգերը և արքայական գաղափարախոսությունը ի ցույց էր դնում բարդ կառուցվածքային տիեզերական ու երկրային իշխանությունների միջև գոյություն ունեցող ներքին կապը: Աքեմենյան տերությունում քրմերը հանդես էին գալիս որպես արքայի խորհրդականներ ու մեկնաբանում էին երազներ: Ինչպես Հրեաստանում, Եգիպտոսում, Բաբելոնում, այնպես էլ Պարսկաստանում ու Աքմենյանների տիրապետության տակ գտնվող այլ վայրերում հողագործները, հովիվները, այգեգործները, արհեստավորները և նույնիսկ պաշտոնյաները տասանորդ էին վճարում իրենց մոտակա Տաճարներին[8]: Հայաստանում Ք. Ա. IV-III դարերի համար նման վկայություն չունենք, սակայն քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո Հայոց եկեղեցուն տրված տասանորդի իրավունքը հուշում է, որ այն ոչ միայն Հին Կտակարանյան արմատներ ուներ, այլև այդ հոգևոր հաստատությանը տրվող հարկատեսակը Աքեմենյան ազդեցությամբ պետք է որ գործեր նաև Երվանդունիների օրոք և շարունակվեր մինչև 301 թ.: Այդ ենթադրության օգտին խոսում է այն փաստը, որ 301 թ. բացի Հայաստանից դեռևս ոչ մի այլ երկրում եկեղեցին պետականորեն հաստատված հարկ չէր ստանում, ուստի ոչ թե փոխ էր առնվում մեկ այլ քրիստոնյա երկրի օրինակը, այլ հին ավանդույթի հիման վրա, հոգևոր մի կառույցից մյուսին էին փոխանցվում հոգևոր իշխանության իրավունքները [9]: Աքեմենյան տիրակալությունում Տաճարները ինքնակառավարվող չէին, թե՞ քրմապետերը և թե՞ նրանցից ներքև եղած քրմական դասի ներկայացուցիչները նշանակվում էին պարսից կառավարության կողմից[10]: Թագավորի կողմից քրմապետի նշանակման դրվագի ականատես ենք լինում նաև Երվանդ Դ-ի պարագայում, ինչը խոսում է երկրում թագավորի բարձր դիրքի մասին: Ժամանակին առաջացրած քաղաքական խնդիրների համար [11] մագդեզական շատ քրմեր աքեմենյան արքունիքում էին կատարում իրենց ծառայությունը, որտեղ նրանք արքաների ուղիղ վերահսկողության ներքո էին [12]:

Երվանդունիների օրոք պաշտվող կրոնը բազմաստվածյան էր՝ միավորված մեկ պանթեոնում, որում, ինչպես նրանց նախորդող Վանի թագավորությունում, գոյություն է ունեցել իշխող թագավորի նախնիների պաշտամունք, որը հետապնդում էր քաղաքական պատճառներ: Դա մի ուրույն եղանակ էր քրմության համար հասարակության առաջ թագավորի սակրալ կերպարի ձևավորման գործում, որի վրա էլ քրմերը կառուցում էին իշխող դասի գաղափարախոսությունը [13] և միևնույն ժամանակ ամրապն-

դում իրենց դիրքը պետական ապարատում: Թագավորի նախնիների պաշտամունքի արձագանք կարելի է համարել Մովսես Խորենացու այն վկայությունը, որ Վահագնը եղել է Երվանդունիների տոհմի ժառանգ և հետագայում աստվածացվել է, իսկ նրանից սերել է Վահունիների տոհմը, որն էլ իրականացրել է Վահագնի պաշտամունքը [14]: Ճիշտ է, Մովսես Խորենացու մոտ նշվում է, որ Վահունիները Վահագնի քրմության պաշտոնը ստացել են Վաղարշակ արքայի օրոք [15], սակայն, ըստ երևույթին, նրանք Արշակունիների օրոք վերստանձնում էին այդ պաշտոնը, որը Արտաշես առաջինի կողմից խլվել էր Երվանդունիների տոհմից՝ Երվազ քրմապետի սպանությամբ:

Ինչպես Ստրաբոնն է վկայում Կապադովկիայի համար [16], նույնպես և Մեծ Հայքում քրմերը և թագավորական ընտանիքը հաճախ պատկանել են միևնույն տոհմին: Միևնույն տոհմին պատկանելու հանգամանքը միանգամայն այլ հարթության վրա պետք է դներ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը: Այդպիսով՝ մի ուժը դառնում է մյուսի համար ամուր հենարան և օտար աղբյուրներում հիշատակվող պատվավոր արմենների կամ ավագանու հետ փոխգործունեության ժամանակ թագավորական գահը բարձրացնում ավելի թելադրող դիրքի:

Բազմաստվածյան կրոնի ժամանակ ամեն մի պաշտվող աստծու համար տարբեր վայրերում կառուցվում էին առանձին տաճարներ և հատկացվում էին հողատարածքներ ու ստրուկներ՝ այդ տարածքները օգտագործելու համար: Օրինակ՝ Կապադովկիայի Կոմանա քաղաքի քրմապետի ենթակայության տակ եղել են մոտ 6000 տղամարդ և կին, ինչպես նաև հսկայական տարածքներ, որոնց շահույթը տնօրինել է հենց քրմապետը, ով հանդիսացել է թագավորից հետո երկրորդ դեմքը [17]: Ժամանակի ընթացքում տաճարների շուրջ ձևավորվում էին ամբողջական համայնքներ, որոնք, աճելով ու զարգացնելով տվյալ տարածքում ապրանքադրամային շրջանառությունը, երբեմն նույնիսկ վերածվում էին քաղաքների: Այդպիսի համայնքներում բացի քրմերի դասից ու նրանց ենթակա ստրուկներից, կային նաև այլ քաղաքացիներ: Գործող տաճարային համալիրը անհրաժեշտություն էր ստեղծում կառուցելու իջևանատներ, սեղանատներ, արհեստանոցներ և զոհաբերվելիք կենդանիների շուկաներ՝ ապահովելու համար տաճարի ու երկրի հեռավոր տարածքներից այդտեղ այցելողների առաջին անհրաժեշտության պահանջները: Նման համայնքները կամ քաղաքները ղեկավարվում էին տվյալ տաճարի գլխավոր քրմի կողմից: Հայաստանի տաճարական համայնքներից հայտնի էին հատկապես Անի Կամախը՝ Արամազդի տաճարով, Թիլ ավանը՝ Նանեի տաճարով, Աշտիշատը՝ Վահագնի պաշտամունքով և Բագավանը՝ Երվանդունիների գահակալման վերջին շրջանում [18]: Երիզա ավանի Անահիտին նվիրված տաճարը և դրան պատկանող տարածքները այնքան նշանավոր են եղել, որ Դիոն Կասսիոսը ողջ շրջանը անվանում էր Անահիտի մարզ[19] կամ ինչպես հայկական աղբյուրներում է հիշատակվում Անահտական գավառ: Ի տարբերություն այլ մեծ տիրույթներ ունեցողների, որոնց տարածքները հիմնականում կենտրոնանում էին այս կամ այն նահանգում՝ քրմաց դասը մեծ տիրույթներ ուներ երկրի գրեթե ամեն նահանգում, որով տնտեսական ազդեցիկ դիրք էր գրավում պետության ներսում:

Ամենայն հավանականությամբ Հայաստանի տաճարային համայնքները նույնպես ունեին ռազմական կառույց, ամրություններ և զորք՝ նման Փոքր Ասիայի այլ տաճարական համայնքների, որտեղ համայնքի բոլոր տղամարդիկ ունեին նաև ռազմական պարտականություններ և անհրաժեշտության դեպքում կոչվի էին դուրս գալիս գլխավոր քրմի հրամանատարությամբ [20]: Քրմերի ռազմական ուժի ապացույց կարող է հանդիսանալ նաև դարեր անց, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ժամանակ, Ագաթանգեղոսի պատմության մեջ հիշատակվող Գրիգոր Լուսավորչի ու թագավորական բանակի դեմ դուրս եկած քրմերի ռազմական ուժը: Հոգևոր իշխանությունը աշխարհիկ իշխանության կողքին պատերազմներին մասնակցություն էր ունենում ճակա-

տամարտի ելքը կանխագուշակող այլևայլ կերպով նշանների ընթերցմամբ ու կատարվելիք արարողություններով:

Թեոկրատիայից անցումը դեպի աշխարհիկ պետություն տեղի է ունեցել Երվանդունիների դինաստիայի օրոք: Երվանդունիների օրոք քրմապետ-արքայի պաշտոնը բաժանվում է արքայի և քրմապետի միջև[21]: Մեր կարծիքով՝ այդ բաժանումը տեղի է ունեցել Երվանդունիների թագավորության վերջին շրջանում: Երվանդունիների սկզբնական շրջանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բաժանված չլինելու մասին է հուշում Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում Քսենոֆոնի կողմից արմենական ցեղերի առաջնորդին տրված (βασίλεύς) անվանումը: Ինչպես գիտենք, բասիլևս տիտղոսի կրողը հունական միջավայրում «բացի զինվորական իրավունքներից, ուներ նաև քրմական և դատական իրավունքներ»[22]: Սակայն Երվանդունիների գահակալության նույնիսկ վերջին շրջանում այնքան էլ հստակ չէր այդ բաժանումը, ինչը երևում է Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունից, որը, ինչպես Հ. Մանանդյանն է ենթադրում, պատկանում է Արմավիրի տաճարի քրմապետ Միթրասին [23]: Հունարեն այդ արձանագրությունը գրված է հելլենիստական նամակի ձևով [24], որը ուղղված է եղել Եբրոնտես-Երվանդ թագավորին: Մեզ համար շատ հետաքրքրական է այն փաստը, որ Միթրաս քրմապետը նամակում և՛ իրեն, և՛ Եբրոնտես-Երվանդին կոչում է թագավոր: Սա ենթադրել է տալիս, որ մենք գործ ունենք հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բաժանման միջին շրջանի հետ: Այդ շրջանում դեռևս քրմապետը կատարում էր թագավորական որոշ գործառույթներ, իսկ արքան պաշտամունքում ուներ իր դերակատարումը. «երբեմն քրմապետի պարտականությունները նույնիսկ միահյուսվում էին թագավորի պարտականություններին»[25]: Ուստի Երվանդունիների օրոք Հայաստանում «թագավորի հետ երկրի կառավարմանը մասնակցել են նաև քրմերը»[26]: Այնուամենայնիվ սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները ցույց են տալիս, որ Երվանդունիների ժամանակ հայոց թագավորը ուներ իրական կառավարական իշխանություն[27]: Հայոց թագավորն էր նշանակում քրմապետին և աշխարհիկ գլխավոր պաշտոնակատարներին: Հայ թագավորները տնօրինում էին իրենց հպատակության տակ եղածների, մեծատոհմիկների սեփականությունը, ազատությունը և անգամ կյանքը: Հենց դա է պատճառը, որ Միթրաս քրմապետի Երվանդ թագավորին ուղղված նույն նամակում, որպես հնազանդության նշան, Արմավիր քաղաքը և դրանում եղած համայնքը «իր հավատարմությունն է հավաստում թագավորին»[28]: Արմավիրի վերոհիշյալ արձանագրությունը թվագրվում է Ք. ա. երրորդ դարի կեսից Ք. ա. երկրորդ դարի սկիզբը ընկած ժամանակահատվածով[29] : Տվյալ ժամանակվա Արմավիրի մեկ այլ արձանագրությամբ, հայոց թագավորի քույր թագուհին նրա մահվան մասին ասում է, որ այդտեղ անփառունակ ոչինչ չկա, քանի որ արքան զենքը ձեռքին է ավանդել շունչը [30] : Այս արձանագրությունը հաստատում է, որ խոսքը այդ ժամանակահատվածում գործած Երվանդ Վերջին թագավորի մասին է, իսկ Արմավիրի քրմապետ Միթրասը, ինչպեսև Մանանդյանն էր կարծում [31], Երվանդի եղբայր Երվազ քրմապետն է:

Հենց Երվանդ Վերջինի օրոք երկրի մայրաքաղաք և պաշտամունքային կենտրոն հանդիսացող Արմավիրից հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կենտրոնները տեղափոխվում են Բագավան և Երվանդաշատ: Մովսես Խորենացին նշում է, որ Արմավիրից մայրաքաղաքի տեղափոխումը կապված էր Արաքս գետի հունի փոխելու հետ, որը մինչ այդ Արմավիրի կողքով էր հոսում, իսկ հունը փոխելուց հետո այնտեղ էր հոսում միայն մի փոքր վտակ, որը, ձմռանը սառելով, խմելու ջրի խնդիր էր առաջացնում [32]: Ս. Պետրոսյանի կարծիքով՝ Արաքսի և Ախուրյանի գետախառնումի մոտ գտնվող մայրաքաղաք Երվանդաշատի, հոգևոր կենտրոն Բագավանի և մայրաքաղաքի տնտեսական կարիքների ապահովման համար նախատեսված Երվանդակերտ դաստակերտի կառուցումը Երվանդ Դ-ի կողմից հին հնդեվրոպական ռազմական, հոգևոր ու

տնտեսական իրավահավասար դասերի ավանդույթի հետևանք էր[33]: Այդ ավանդույթը հասարակությունը բաժանում էր երեք հիմնական գործառույթային դասերի, որոնցից յուրաքանչյուրը աշխատում էր իր տիրույթում, հոգ տանում իր խմբի ամեն մի անդամի համար, շփման մեջ էր մտնում այլ դասերի հետ և այդ կերպով բավարարվում էր հասարակության առաջնային կարիքները[34]:

Մեր կարծիքով՝ շինարարական այդ աշխատանքների հիմնական նպատակը ռազմական էր: Նախ պետք է նշել, որ Երվանդական Հայաստանում, տնտեսական կարիքների համար օգտագործվող ստրկական ուժի և դասակարգային հարաբերությունների խորացման պարագայում, անհնարաստ է դառնում հին հնդեվրոպական ավանդույթի տնտեսական դասին հոգևոր և ռազմական դասերի հետ հավասար լինելու մասին խոսելը: Բացի այդ, տվյալ շրջանի ցանկացած մեծ քաղաք իր շուրջը ուներ դրա տնտեսական կարիքները ապահովող օբյեկտներ, անկախ նրանից դրանք կլինեին հողատարածքներ, թե դաստակերտներ: Ք. ա. 3-րդ դարի կեսից Մեծ Հայքին հյուսիսից սպառնում էին վրացա-սարմատական ուժերը, հարավ-արևելքից Ատրպատականը, իսկ հարավից՝ Սելևկյանները, որոնք Մեծ Հայքը նվաճելու համար հովանավորում էին թե՞ արտաքին, թե՞ ներքին ուժերին[35]: Դրա հետևանքով Սելևկյանների հովանավորությամբ Արտաշեսը տապալեց Երվանդունիների թագավորությունը, և հայկական տարածքները վերածվեցին սելևկյան ստրատեգիաների: Ուրեմն Երվանդ Վերջինի վերոհիշյալ շինարարական աշխատանքները ունեին նույն նպատակը, ինչպես որ վրացական աղբյուրներում հիշատակվող Զավախքի Քաջաց քաղաքի կառուցումը երկրի հյուսիսում և արևելյան ու հարավ-արևելյան սահմանները պաշտպանելուն ուղղված քայլերը[36] :

Նույն ճանապարհի վրա Երվանդաշատից մոտ 8 կմ դեպի հյուսիս է գտնվում Երվանդ Դ-ի Ախուրյանի ափին կառուցած երրորդ քաղաքը՝ Բագարանը, որի անունը նշանակում է «աստվածների բնակավայր»: Մովսես Խորենացու վկայությամբ Երվանդը Արմավիրից բոլոր կուռքերը տեղափոխել է տալիս Բագարան, դարձնում այն Մեծ Հայքի նոր հոգևոր կենտրոնը և իր եղբայր Երվազին կարգում այդտեղ քրմապետ: Կրկյաշարյանի կարծիքով՝ կրոնական կենտրոնը նոր կառուցված Երվանդաշատ մայրաքաղաքի փոխարեն տեղափոխվեց Բագավան, որպեսզի դրանով կանխվի հոգևոր իշխանության հետագա հզորացումը [37]: Մեր կարծիքով՝ այդ քաղաքը կառուցվել էր ոչ թե քրմաց դասի հզորությունը կանխելու համար, ինչպես Կրկյաշարյանն է գրում, այլ որպեսզի երկրի հոգևոր կենտրոնը ավելի ապահով վայրում գտնվեր և մայրաքաղաքի գրավման պարագայում հնարավոր լիներ կարճ ճանապարհ անցնելով պատսպարվել այնտեղ: Հնագիտական պեղումները ևս ցույց են տալիս այդ հնարավորությունը: Բագարանը նման է եղել Երվանդաշատին, սակայն չափերով ավելի փոքր: Այն կառուցված է եղել բարձր ժայռի վրա, ունեցել է աստիճանաձև հարթակներով միջնաբերդ, իսկ այդ տեղանքը, ըստ Թ. Թորամանյանի, աչքի է ընկել բնական անառիկությամբ[38]: Բացի այդ, քաղաքական նման իրավիճակում Երվանդ Վերջինին ձեռնտու չէր քրմաց դասի թուլացումը: Արտաքին ներգործությամբ քաղաքական պառակտման այդ ժամանակահատվածում Երվանդը կարիք ուներ հավատարիմ կողմնակիցների, ինչպիսին հանդես է գալիս իր տոհմից սերող քրմաց դասը՝ իր իսկ եղբայր Երվազի գլխավորությամբ: Այդ հավատարմության մասին մենք տեղեկանում ենք Արմավիրի հունարեն արձանագրությունից, երբ քրմապետը ոչ միայն իր, այլև ողջ Արմավիր քաղաքի հավատարմությունն է հայտնում արքային: Բացի այդ, մայրաքաղաքի և հոգևոր կենտրոնի տեղափոխումը Արմավիրից Երվանդաշատ ու Բագավան նպատակ ուներ ավելի սկզբունքային ուղու վրա դնել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բաժանման գործընթացը: Դրանով նաև վերջ կդրվեր այն իրավիճակին, երբ թագավորի ներկայությամբ քրմապետն էր հանդիսանում մայրաքաղաքի գլխավորը[39]: Արմավիրի բնակիչների կարգավիճակը նման էր Ստրաբոնի հիշատակած Կապադովկիայի Կոմանա

քաղաքի բնակիչների դրությանը, երբ նրանք ընդհանուր առմամբ համարվում էին թագավորի ենթակաները, բայց առավելապես ենթարկվում էին քաղաքի գլխավոր քրմին, որը համարվում էր թագավորից հետո երկրորդ անձը[40]:

*Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության կարևոր դրվագ է նաև Երվանդ Վերջինի գահակալման արարողությունը: Ըստ Կրկյաշարյանի՝ Հայաստանի քրմապետերին տրված է եղել արքային թագադրելու առանձնաշնորհումը, որը չի հանդիպում հելլենիստական հարևան երկրներում [41]: Թագադրման ընդունված արարողակարգը չափազանց կարևոր է եղել գահակիրի կայուն իշխանության համար, որովհետև այն «ոչ միայն օրինականացնում էր տվյալ թագավորի իշխանությունը, այլև միաժամանակ հաստատում էր թագադրողի և թագադրվողի, այն է՝ քրմապետի և թագավորի դաշինքը և համագործակցությունը՝ երկրի կառավարման գործում»[42]: Հայաստանում, արդեն իսկ Երվանդական ժամանակաշրջանում, հիշատակվում է, որ թագադիրի պաշտոնը պատկանում էր Բագրատունիներին: Այդ պատճառով Ա. Գարագաշյանը կարծում է, որ Բագրատունիները Վահունիների նման եղել են քրմական տոհմ, քանի որ Բագրատունի անվան հնդեվրոպական **բագ** արմատը «աստված» է նշանակում և թագավորի թագադրման արարողությունը հայերի շրջանում ինքնին կրոնական երևույթ էր [43]: Հրեաների պարագայում նույնպես թագադրման արարողությունները կատարվել են քահանայական դասի կողմից [44]: Բագրատունիները Մովսես Խորենացու վկայությամբ Արծրունիների հետ մեկտեղ հանդես էին գալիս որպես արքայազնի դայակներ, իսկ արքայազներին, բացի ռազմական պատրաստվածությունից, ուսուցանում էին նաև ժամանակի հասանելի գիտելիքները, որի հիմնական կրողները հանդիսանում էին քրմերը: Մի հանգամանք ևս խոսում է այդ տեսակետի օգտին. Երվանդ Դ-ի գահակալությանը մասնակցած մեծամեծերի մեջ չեն եղել Բագրատունիները, որոնց հենց պատկանում էր թագադիրի պաշտոնը: Հնարավոր է պատճառը այն էր, որ Երվանդը քրմապետի պաշտոնը տվել էր եղբորը՝ գուցե և այն վերցնելով Բագրատունիներից: Սակայն, դա միայն ենթադրություն է, բայց պարզ է մի բան, որ այդ դեպքերից հետո սրվել են Երվանդ Վերջինի ու Սմբատ Բագրատունու հարաբերությունները*

Քրմական դասի կարևորությունն այնքան մեծ էր այդ ժամանակ, որ Արտաշեսը Երվանդավանում կատարյալ հաղթանակից և Երվանդ Վերջինի սպանությունից հետո, երբ դարձավ Մեծ Հայքի թագավոր, հրամայեց սպանել Երվազ քրմապետին, որովհետև նա որպես Երվանդունիների տերության վերջին հիմնասյուն, կարող էր սպառնալիք հանդիսանալ իր թագավորության և նոր հիմնադրված դինաստիայի համար: Երվազի սպանությունը տեղի է ունենում՝ քրմապետի միհրական Միթրաս/Միհր գահանվամբ արևի աստծու հետ նույնացված լինելու նկատմամբ իրոնիայով: Ըստ այդ կրոնական պատկերացման՝ արևը ծնվում էր ծովից և մայրամուտին նորից վերադառնում էր ծովը [45]: Ուստի Սմբատ Բագրատունին հրամայում է Երվազի պարանոցից երկանաքար կապել և նրան գցել գետը. ինչը խոսում է նաև անձնական թշնամանքի մասին: Այդ կերպով Մեծ Հայքում վերջ տրվեց Երվանդական արքայատոհմի գահակալական շրջանին, որի ընթացքում հոգևոր և աշխարհիկ իշխանությունները սերտ կապերով կապված էին միմյանց հետ և ամուր հենարան էին հանդիսանում միմյանց համար:

Այսպիսով՝ Երվանդական դարաշրջանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները ցույց են տալիս՝

- *Երվանդունիների օրոք, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունները զարգացել են Վանի թագավորության թողած ժառանգության հիմքի վրա և Աքեմենյան տերության ազդեցությամբ:*
- *Թագավորական նախնիների պաշտամունքը ոչ թե հելլենիստական ազդեցությամբ է սկսվել Արտաշեսյանների օրոք, ինչպես կարծում են որոշ մասնագետներ, այլ այն ունի ավելի խորը արմատներ և գոյություն է ունեցել դեռևս Վանի*

թագավորությունում և Երվանդունիների ժամանակաշրջանում և այդ մակարդակի վրա զարգացել է նրանց հաջորդող մյուս դինաստիայի օրոք:

- *Քրմական դասի և թագավորական ընտանիքի միևնույն տոհմին պատկանելու հանգամանքը չափազանց սերտացնում էր երկու իշխանությունների փոխհարաբերությունները. հոգևոր իշխանությունը մինչև վերջ աջակցում էր հայոց արքային:*
- *Հավանական ենք համարվում, որ Վահունիները Արշակունիների օրոք ոչ թե նոր կարգվում են քրմության պաշտոնի, այլ վերստանձնում են Արտաշեսյանների օրոք իրենց տոհմից խլված պաշտոնը:*
- *Երվանդունիների գահակալության վերջին շրջանում սկսված հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բաժանման գործընթացը վերջնականապես չավարտվեց: Արքայական ընտանիքի ձեռքում քրմապետի պաշտոնը շարունակվեց մնալ նաև նրանց հաջորդող՝ Արտաշեսյան դինաստիայի օրոք:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Ադոնց Ն. , Քննական պատմություն հայոց, Երկեր, Դ հատոր, Երևան, 2009, էջ 256:
2. Ա. Խաչատյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 25:
3. А. Г.Сукиасян,Очерк истории государства и права Биайнили-Урарту (880-590 гг. до н. э.), Ереван, 1975, стр. 66.
4. Տե՛ս Հացունի Վ., Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 20:
5. L. L. Jones, King and Court in Ancient Persia 559 to 331 BCE, Edinburg, 2013, page 114.
6. B. A. Salvini, Forgotten Empire. The World of Ancient Persia, Los Angeles, 2005, page 148.
7. J. Curtis, J. Simpson, The World of Achaemenid Persia. History, Art and Society in Iran and the Ancient Near East, London, 2010, page 88.
8. Տե՛ս М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика Древнего Ирана, Москва, 1980, с. 345.
9. Առաջին դարերում տասանորդի վերաբերյալ, եկեղեցական հայրերի տարբեր տեսակետների պարագայում, թեպետև եղել է համաձայնություն, սակայն այդ հարցի մասին առաջին հավաքական պաշտոնական հայտարարությունը հնչել է Մակոնի 585 թ. ժողովում: Տե՛ս **E.** Ferguson, L. J. Swift, Encyclopedia of Early Christianity, New York, 2010, p. 1134.
10. L. S. Fried, The Priest and the Great King. Temple-Palace Relations in the Persian Empire, Indiana, 2004, page 156.
11. Խոսքը մոգ Գաումատայի մասին է, որը արքայական գահ էր բարձրացել, հանդես գալով Կյուրոս Մեծի Բարդիա որդու անվան տակ, որին սպանել էր եղբայրը՝ Կամբյուսես Բ-ը: Գահակալական այդ կռիվները ի վերջո ավարտվում են Աքեմենյան արքայատոհմի մեկ այլ ճյուղի ժառանգորդ Դարեհ Ա-ի հաղթանակով: Տե՛ս D. M. Lewis, The Cambridge Ancient History. Persia, Greece and the Western Mediterranean, Volume IV, Cambridge, 2002,p. 54. М. А. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 72-74.
12. B. A. Salvini, ForgottenEmpire. The World of Ancient Persia, Los Angeles, 2005, page 152.

13. Տե՛ս Սարգսյան Գ., Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգը հելլենիստական դարաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 663:
14. Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, (քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս Յարութիւնեանի), Երևան, 1991, էջ 85-86:
15. Տե՛ս նույն տեղում, էջ 116:
16. Տե՛ս Strabo, The Geography of Strabo,Volume V, (translated by H. L. Jones) London, 1961,p. 353.
17. Տե՛ս նույն տեղում, էջ 353:
18. Տե՛ս Периханян А., Храмовые объединения Малой Азии и Армении. (IVв. Дон. э. –IIIв. н. э.), Москва, 1959, с. 8-9.
19. Տե՛ս A. D. Jong, Traditions of Magi, Zoroastrianism in Greek and Latin Literature, New York, 1997, p. 277.
20. Տե՛ս Периханян А., նշվ. աշխ. , էջ 77:
21. Տե՛ս Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (Ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 92:
22. Կրկյաշարյան Ս. , Հին Հայաստանի պետական կառուցվածքը(մ.թ.ա. VI-IV դ.դ.), Երևան, 2005, էջ 95:
23. Տե՛ս Մանանդյան Հ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 18:Արմավիրի արձանագրությունների շուրջ կան բազում տարակարծություններ, սակայն մեզ համար ամենահավանականը Հ. Մանանդյանի տեսակետն է: Արմավիրի արձանագրությունների վերաբերյալ տե՛ս Ս. Տեր-Հակոբյան, Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության մասին, ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ,հ. I, Երևան, 1935, էջ 143-150: С. Тер-Аветисян, Археологическое обследование городща и крепости «Древний Армавир»,Գիտական ժողովածու Արմֆանի, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, էջ 61-62: Ս. Մ.Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 134-139: К. Тревер, Очерки по истории и культуры древней Армении (II в. до н. э.- IV в. н.э), Москва, 1953, с. 135-137. Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 124-138:Լ. Պետրոսյան, Երվանդունյաց դարաշրջանի Հայոց վերջին քրմապետը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ աշխատություններ, X, Գյումրի, 2007, էջ 43-44 և ուրիշներ:
24. Տե՛ս Կրկյաշարյան Ս., Հայոց արքայի տիտղոսաշարի մասին, ԼՀԳ, Երևան 1982, էջ 46:
25. Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 139:
26. Ս. Մ.Կրկյաշարյան, Պետական ապարատի կազմավորումը և նրա հետագա զարգացման փուլը Հին Հայաստանում, ՊԲՀ, Երևան, 1994, էջ 225:
27. Տե՛ս Տիրացյան Գ., Հին հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, էջ 100:
28. Տիրացյան Գ.,Արմավիրի պեղումները (Առաջին պեղումների 100-ամյակի առթիվ), ՊԲՀ, Երևան, 1980, էջ 28:
29. Կան նաև այլ կարծիքներ, որոնց վերաբերյալ 14-րդ տողատակում նշել ենք աղբյուրները:
30. Տե՛ս Ստեփանյան Ա., Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Գիրք Ա. Արտաշեսյան դարաշրջան, Երևան, 2012, էջ 160-161:
31. Տե՛ս Մանանդյան Հ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ,էջ 19:

32. Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 165:
33. Տե՛ս Պետրոսյան Ս., Եռյակ բնակավայրերի համակարգը Ախուրյանի ավազանում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ, V, Գյումրի, 2002, էջ 5-6:
34. Տե՛ս K. K. Sinha, Social and Cultural Ethos of India, New Delhi, 2008, p. 12.
35. Տե՛ս Պետրոսյան Լ., Երվանդ Վերջինի քաղաքական մեկուսացումը և վախճանը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ, XI, Գյումրի, 2008, էջ 90:
36. Տե՛ս Պետրոսյան Լ., Երվանդ Վերջինի ռազմական բնույթի շինարարության մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ, VI, Գյումրի, 2003, էջ 65-70:
37. Տե՛ս Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 140:
38. Տե՛ս Միքայելյան Լ., Երվանդաշատի միջնադարյան հուշարձաններն ըստ պատմական աղբյուրների և հնագիտական նորագույն ուսումնասիրությունների, ԵՊՀ Պատմություն և մշակույթ հայագիտ. հանդես, Երևան, 2013, էջ 248:
39. Տե՛ս Саркисян Г., Тигранакерт. Из истории древнеармянских городских обшин, Москва, 1960, с. 40.
40. Տե՛ս H. L. Jones, The Geography of Strabo,p. 353.
41. Տե՛ս Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, էջ 152:
42. Կրկյաշարյան Ս., Պետական ապարատի կազմավորումը և նրա հետագա զարգացման փուլը Հին Հայաստանում, ՊԲՀ, Երևան, 1994, էջ 116:
43. Տե՛ս Գարագաշյան Ա., Քննական պատմութիւն Հայոց, Մասն. Ա., Թիֆլիս, 1895, էջ 178:
44. Հրեաների արքաներից Սավուղը (Ա. Թագ. Ժ.1), Դավիդը (Ա. Թագ. ԺԶ.13), Սողոմոնն (Գ. Թագ. Ա.45) ու մնացածները թագավոր էին օծվում քահանաների կողմից: Տե՛ս Աստվածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների, էջմիածին, 2001, էջ 330, 339, 394:
45. Տե՛ս Պետրոսյան Լ., Երվանդունյաց դարաշրջանի Հայոց վերջին քրմապետը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ աշխատություններ, X, Գյումրի, 2007, էջ 45:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանում Երվանդական ժամանակաշրջանում

Հայկարամ Հակոբյան

Հոդվածում քննարկվում է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Երվանդունիների թագավորությունում: Ուսումնասիրությունը հանդիսանում է Ք. ա. IV-III դարերի Հայոց պատմության մի ուրույն և կարևոր դիտարկում: Շեշտվում է Վանի թագավորության և Աքեմենյան տերության թողած հետքը Երվանդունիների դարաշրջանի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների վրա: Ուսումնասիրվում է այդ հարաբերությունները պայմանավորող հոգևոր, մշակութային, գաղափարական, տնտեսական, ռազմական, քաղաքական և իրավական գործոնները: Անդրադարձ է կատարվում թագավորական նախնիների պաշտամունքի, թեոկրատիայից աշխարհիկ պետության անցման գործընթացի, թագավորական գահակալման արարողակարգի, թագավորի և քրմապետի տոհմական պատկանելիության ու Երվանդ Դ-ի գործունեության նպատակաուղվածության հարցերին:

РЕЗЮМЕ

Взаимоотношения духовных и светских властей в Армении в эпоху Ервандидов

Айкарам Акопян

Ключевые слова: теократия, монарх, политеизм, верховный жрец, династия, королевский родовой культ, культовый центр.

В статье рассматриваются взаимоотношения духовных и светских властей в царстве Ервандуни. Данное исследование посвящается истории Армении в IV-III вв. до. Р. Хр. С., уникальной и важной точки зрения. Особое внимание уделяется воздействию Ванского королевства и империи Ахеменидов на взаимоотношения между духовными и светскими властями эпохи Ервандуни. Изучаются духовные, культурные, идеологические, экономические, военные, политические и правовые факторы, которые определяли эти отношения. Упоминаются вопросы поклонения королевским усопшим, процесс перехода от теократического государства к светскому, процесс королевского вознесения на престол, племенная принадлежность короля и верховного жреца, а также цель деятельности Ерванда IV.

SUMMARY

The Relationship between Spiritual and Secular Authorities in Armenia in the Eurandids period

Haykaram Hakobyan

Keywords: theocracy, monarch, polytheism, high priest, dynasty, royal ancestor worship, a cult centre.

The article discusses the relationship between spiritual and secular authorities during the rule of the Yervanduni. The study is a unique and important observation of Armenian history in IV-III centuries BC. It is emphasized by traces of the Kingdom of Van and the Achaemenid Power on the relationship between spiritual and secular authorities during Ervandian dynasty. The spiritual, cultural, ideological, economic, military, political and legal factors underlying these relationships are studied. Reference is made to the royal ancestor worship, the transition from theocracy to secular power, ceremony of royal enthronement tribal affiliation of king and high priest and to purpose of Yervand the Fourth's actions.